ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Մայրանուշ Մանվելյան

Անի Սարիբեկյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության հետազոտությունների և զարգացման բաժնի պետ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության նախագծերի իրականացման բաժնի ՏՏ պատասխանատու

3. Գործուղման վայրը և ժամկետները

Բուդապեշտ, Հունգարիա, 2022 թվականի հոկտեմբերի 10-ից 13-ը

4. Հրավիրող կողմը

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն (ՀՄՆԿ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

2022 թվականի հոկտեմբերի 10-ից 13-ն ընկած ժամանակահատվածում Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության կողմից կազմակերպվել է «Հարկային վարչարարության նկատմամբ վստահության ձևավորում» խորագրով համաժողով, որին հրավիրված էին ՀՄՆԿ բոլոր անդամ-երկրները, այդ թվում՝ Հայաստան, Ադրբեջան, Ավստրիա, Բելգիա, Խորվաթիա, Չեխիա, Դանիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Վրաստան, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լիտվա, Մալթա, Մակեդոնիա, Նորվեգիա, Նիդերլանդներ, Լեհաստան,

Պորտուգալիա, Ռումինիա, Սերբիա, Սլովակիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Բոսնիա և Հերցեգովինա, Միացյալ Թագավորություն:

Համաժողովի գլխավոր նպատակն էր նպաստել շահագրգիռ/մասնակից երկրների հարկային մարմինների կարողությունների ուժեղացմանը՝ ուղղված հարկ վճարողների և հարկային ծառայողների կողմից հարկային մարմնի նկատմամբ վստահության բարձրացմանը:

Միջոցառմանը մասնակցությունը հնարավորություն է տվել ձեռքբերել գործնական փորձ ու գիտելիքներ՝ հարկային մարմնի նկատմամբ վստահության բարձրացման (ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահառուների շրջանում) վերաբերյալ: Միաժամանակ, ներկայացվել են տարբեր ԵՄ և ոչ ԵՄ անդամ երկրների կողմից իրենց ռազմավարական ծրագրերում ներառված նշված նպատակի իրագործմանն ուղղված միջոցառումները:

Ձեռքբերված գիտելիքները կնպաստեն հարկային մարմնի նկատմամբ վստահության բարձրացմանը և կամավոր հարկային կարգապահության խթանմանը:

Միջոցառումը կազմակերպվել է նոր ձևավորված Հաղորդակցության ֆորումի աշխատանքների շրջանակներում: Ֆորումի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել հանդիպումներ յուրաքանչյուր տարի՝ տարեկան մեկ անգամ, ֆորումի գործունեության ողջ ընթացքում:

6. Քննարկված թեմաները

Համաժողովը կազմակերպվել է 2 հիմնական ուղղություններով՝ ներքին շահառուների շրջանում հարկային մարմնի նկատմամբ վստահության բարձրացում և արտաքին շահառուների շրջանում հարկային մարմնի նկատմամբ վստահության բարձրացում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի ընթացքում ելույթներ են ունեցել Միացյալ Թագավորության, Հունաստանի, Ադրբեջանի, Բելգիայի, Իսպանիայի, Նորվեգիայի, Իտալիայի,

Ռումինիայի, Ֆինլանդիայի, Լիտվայի և Շվեդիայի ներկայացուցիչները: Ներկայացվել են հետևյալ զեկույցները.

1) վստահության կառուցման վերաբերյալ հետազոտական արդյունքները կոնկրետ քայլերի փոխարկումը,

2) ներքին շահառուների վստահության ամրապնդումը Հունաստանի հարկային մարմնում,

3) հանրության հետ վստահության վրա հիմնված հաղորդակցության մեխանիզմները,

4) Բելգիայի հարկային ծառայողների կերպարը՝ որպես նոր ապրանքանիշ,

5) Իսպանիայի հարկային ծառայության նախաձեռնությունները՝ ուղղված հարկ վճարողների վստահության բարձրացմանը,

6) վստահություն, ռիսկերի բացահայտում և արդարություն" հաղորդակցության ուղիների ընտրության կարևորությունը,

7) երիտասարդների տեղեկացվածության բարձրացմանն ուղղված քայլեր" հնարավորություններ և մարտահրավերներ,

8) Ֆինլանդիայի հարկային մարմնի «Երջանիկ հարկ վճարող» նախաձեռնությունը:

Բացի ներկայացված զեկույցներից համաժողովի շրջանակներում կազմակերպվել են քննարկումներ, որոնց շրջանակներում մասնակիցները կիսվել են իրենց փորձով, ձեռքբերված արդյունքներով և հնարավոր բացթողումներով: Մասնավորապես, քննարկվել են հետևյալ հարցերը.

1) որոնք են հարկային ծառայողների շրջանում հարկային մարմնի նկատմամբ վստահության բարձրացման հիմնական չափանիշները,

2) ներքին հաղորդակցության արդյունավետ փորձի ներկայացում,

3) աշխատակիցների վստահության չափման մեխանիզմները,

4) արտաքին հաղորդակցության արդյունավետ փորձի ներկայացում,

5) հաղորդակցության ոլորտի ռիսկերը,

6) վստահության ամրապնդումը երիտասարդների թիրախային խմբում" սոցիալական մեդիայի դերը,

7) հարկային մարմնի նկատմամբ վստահության ամրապնդմանն ուղղված հարկ վճարողների կարիքները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել և որոշումներ չեն ընդունվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Որպես համաժողովի ամփոփում, քննարկվել է հաջորդող հանդիպումների օրակարգը, հետագա թեմաները, որոնք պետք է դրվեն Հաղորդակցության ֆորումի հիմքում:

Առաջարկվել է առավել մանրամասն անդրադառնալ հարկ վճարողներին «դրդելու» տեխնիկաներին (Nudging techniques), հետագա հանդիպումների ընթացքում քննարկել տարբեր երկրների հարկային մարմիններում կիրառվող հարկ վճարողներին «խթանելու» փորձին և դրանց արդյունքներին:

Միաժամանակ, կարևորվել է հատկապես ճգնաժամային իրավիճակներին հարկային մարմնի պատրաստվածությունը, այդ ընթացքում հարկ վճարողների վստահությունը չկորցնելու և բոլոր մարտահրավերներին դիմակայելու տեսանկյունից:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Մայրանուշ Մանվելյան

Անի Սարիբեկյան

17.10.2022թ.